ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/105

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Բողոք բերող՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ

Մասնակցությամբ՝
«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5» ծածկագրով գնման ընթացակարգ, ՀՀ Արարատի մարզի Մխչյան, Արալեզ, Փոքր Վեդի, Մասիս և Նոր Կյանք համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3849-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 28.02.2022թ.-ի թիվ Ե/01/348-22 գրության հիման վրա, 07.03.2022թ.-ին «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.03.2022թ.-ին:

09.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/105 համարի ծածկագիրը:

16.03.2022թ.-ին և 01.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2022թ.-ին:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն 28.02.2022թ.-ի թիվ Ե/01/348-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից 2021 թվականի նոյեմբերի 4-ին հրապարակվել է ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի դեկտեմբերի 14-ին: Ընթացակարգին հայտեր են նաև ներկայացվել «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ, «Փայլք» ՍՊԸ, «Բաղրամյանշին» ԲԲԸ, «Արտեզիա» ՍՊԸ, «Շինարվեստ» ՍՊԸ-ի, «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի, «Մեդիսոն էյբլ» ՍՊԸ -ների կողմից:

«Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ծավալաթերթ-նախահաշիվներում ներկայացված կշիռները չեն համապատասխանել հրավերով սահմանված կշիռներին և շեղման չափին, իսկ Հավելված 1.1-ով («Սարքերի և

սարքավորումների նկարագիրը») ներկայացված սարքերի և սարքավորումների ցանկը չէր համապատասխանում հրավերի պահանջներին: «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով: «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է շտկված Հավելված 1.1-ը և վերանայված ծավալաթերթ-նախահաշիվները, սակայն, ներկայացված կշիռներում նորից առկա է եղել անհամապատասխանություն հրավերով սահմանված կշիռների և շեղման չափերի համեմատ:

«Փայլք» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում բացակայում էին ծավալաթերթ-նախահաշիվները և «Սարքերի և սարքավորումների նկարագիրը». Հավելված 1.1-ով ներկայացված սարքերի և սարքավորումների ցանկը չէր համապատասխանում հրավերի պահանջներին: «Փայլք» ՍՊԸ-ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով: «Փայլք» ՍՊԸ -ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են ծավալաթերթ-նախահաշիվները, և վերանայված Հավելված 1.1-ը, որում, սակայն, շտկում չի իրականացվել:

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ծավալաթերթ-նախահաշիվներում ներկայացված կշիռները չեն համապատասխանել հրավերով սահմանված շեղման չափին և ընդհանուր գները չեն համապատասխանել «գնային առաջարկ» ֆայլում նշված արժեքներին, ինչպես նաև, «Սարքերի և սարքավորումների նկարագիրը»՝ Հավելված 1.1-ով ներկայացված սարքերի և սարքավորումների ցանկը, չէր համապատասխանում հրավերի պահանջներին: «Բաղրամյանշին» ԲԲԸ -ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով: «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է վերանայված Հավելված 1.1-ը և ծավալաթերթ-նախահաշիվները, սակայն, Հավելված 1.1-ում շտկում չի իրականացվել:

«Արտեզիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ծավալաթերթ-նախահաշիվներում ներկայացված կշիռները չեն համապատասխանել հրավերով սահմանված շեղման չափին, իսկ Հավելված 1.3-ը թերի է լրացվել: «Արտեզիա» ՍՊԸ-ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով: «Արտեզիա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է վերանայված Հավելված 1.3-ը և ծավալաթերթ-նախահաշիվները, սակայն, ներկայացված կշիռներում նորից առկա է եղել անհամապատասխանություն հրավերով սահմանված կշիռների շեղման չափերի հետ:

«ՇՄՇ-23» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում էլեկտրոնային թվային ստորագրությունը անվավեր է եղել, «Սարքերի և սարքավորումների նկարագիրը»՝ Հավելված 1.1-ով ներկայացված սարքերի և սարքավորումների ցանկը, չէր համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ Ծավալաթերթ-նախահաշիվներում կշիռները չեն համապատասխանում հրավերով հրապարակված կշռին և թույլատրելի շեղմանը: «ՇՄՇ-23» ԲԲԸ-ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով, սակայն պատասխան նամակ չի ստացվել:

«Շինարվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում «Սարքերի և սարքավորումների նկարագիրը»՝ Հավելված 1.1-ով ներկայացված սարքերի և սարքավորումների ցանկը, չէր համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ Ծավալաթերթ-նախահաշիվներում կշիռները չեն համապատասխանում հրավերով հրապարակված կշռին և թույլատրելի շեղմանը: «Շինարվեստ» ՍՊԸ-ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով, սակայն պատասխան նամակ չի ստացվել:

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում «Սարքերի և սարքավորումների նկարագիրը»՝ Հավելված 1.1-ով ներկայացված սարքերի և սարքավորումների ցանկը, չէր համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ Ծավալաթերթ-նախահաշիվներում կշիռները չեն համապատասխանում հրավերով հրապարակված կշռին և թույլատրելի շեղմանը: «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով, սակայն պատասխան նամակ չի ստացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ:

Կից ներկայացվում է վերոգրյալ ընկերությունների կողմից ներկայացված հայտերի, ընկերություններին ներկայացված ծանուցումների, ծանուցումների պատասխանների, հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենները, ինչպես նաև հրավերով հրապարակված սարքերի և սարքավորումների ցանկը և ծավալաթերթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.03.2022թ.-ի գրությամբ դիմել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3849-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ն 28.03.2022թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Բաղրամյանշին» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «ՀՀ Արարատի մարզի Մխչյան, Արալեզ, Փոքր Վեդի, Մասիս և Նոր Կյանք համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն: Հայտերի բացման վերջնաժամկետն է 12.11.2021թ.:

Տվյալ ընթացակարգի շրջանակներում շտկման ծանուցումը «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին ուղարկվել է 07.01.2022թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ներկայացված «Սարքերի և սարքավորումների նկարագիրը»՝ Հավելված 1.1-ով, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում, և ծավալաթերթ-նախահաշիվներում ներկայացված կշիռները չեն համապատասխանել հրավերով սահմանված շեղման չափին:

Վերը նշվածի արդյունքում նույն արձանագրության 2-րդ կետով որոշվել է կասեցնել նիստը և ծանուցել վերը նշված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն 10.02.2022թ. տեղի ունեցած բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ որոշվել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժել, քանի որ Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը հրապարակվել է կայքում 11.02.2022թ.:

28.02.2022թ. թիվ Ե/01/348-22 գրությամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ներկայացրել է մասնակցի տվյալները լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ինչպես արդեն հայտնել ենք, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «ՀՀ Արարատի մարզի Մխչյան, Արալեզ, Փոքր Վեդի, Մասիս և Նոր Կյանք համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5» ծածկագրով

գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն: Հայտերի բացման վերջնաժամկետ է հանդիսացել 12.11.2021թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ներկայացված «Սարքերի և սարքավորումների նկարագիրը»՝ Հավելված 1.1-ով, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում, և ծավալաթերթ-նախահաշիվներում ներկայացված կշիռները չեն համապատասխանել հրավերով սահմանված շեղման չափին:

Վերը նշվածի արդյունքում նույն արձանագրության 2-րդ կետով որոշվել է կասեցնել նիստը և ծանուցել վերը նշված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ որոշվել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժել, քանի որ Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք պահանջներ և կայացրել ոչ իրավաչափ որոշում, որի պարագայում գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ որոշումները չեն կարող հանգեցնել մասնակցին՝ «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելուն: Մասնավորապես.

1. Ինչպես արդեն հայտնել ենք, տվյալ Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետն է հանդիսացել 12.11.2021թ.: Սակայն մինչև 10.02.2022թ., այսինքն գրեթե 3 ամիս, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի հրավիրել հայտերի բացման նիստ, չի կազմել հայտերի բացման արձանագրություն և չի հրապարակել հայտերի բացման արձանագրությունը տեղեկագրում: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը իմպերատիվ սահմանում է, որ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Իսկ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվի տեղեկագրում:

Այսպիսով, տվյալ Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետն է հանդիսացել 12.11.2021թ., սակայն մինչև 10.02.2022թ., այսինքն գրեթե 3 ամիս, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի հրավիրել հայտերի բացման նիստ, չի կազմել հայտերի բացման արձանագրություն և չի հրապարակել այն: Վերոհիշյալ նիստը

կայացել է միայն 10.02.2022թ., իսկ կայքում արձանագրությունը հրապարակվել միայն 11.02.2022թ.:

2. Տվյալ ընթացակարգի շրջանակներում շտկման ծանուցումը Կարգի 41-րդ կետի հիման վրա մասնակցին ուղարկվել է 07.01.2022թ.: Սակայն հատում անհամապատաս¬խանությունը «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտում գնահատող հանձնաժողովի կողմից համապատասխան որոշմամբ արձանագրվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի միայն 10.02.2022թ. տեղի ունեցած բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությամբ, և նույն արձանագրությամբ որոշում է կայացվել տալ համապատասխան շտկում, ապա հարց է առաջանում, թե ինչի հիման վրա է մասնակցին դրանից մեկ ամիս առաջ, այն է՝ 07.01.2022թ., ուղարկվել է շտկման շանուցում:

3. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջների խախտում, քանի որ հայտերի բացման և գնահատման վերջնաժամկետ է սահմանվել 12.11.2022թ., սակայն ԲԲԸ-ի հայտը գնահատվել է է միայն 10.02.2022թ., այսինքն սահմանված 10 աշխատանքային օրվա կոպիտ խախտմամբ, որի պայմաններում գնահատող հանձնաժողովի թե՛ հայտը գնահատելու և թե՛ հայտը մերժելու մասին որոշումները չեն կարող դիտարկվել որպես իրավաչափ:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 43-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխա¬նությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նկատի ունենալ, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժելու որոշումը վերացական է, չհիմնավորված, և մնում է միայն կռահել, թե ներկայացրած Հավելվածը ինչով չի համապատասխանում հրավերի ինչ պահանջներին: Մինչդեռ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը և Կարգի 43-րդ կետը հստակ պահանջում են, որ գնահատող հանձնաժողովի հայտը մերժելու մասին որոշումը լինի հիմնավորված, ինչը տվյալ դեպքում առկա չէ:

5. Եվ վերջապես, ամենակարևորը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժվել է: Սակայն միայն 28.02.2022թ. թիվ Ե/01/348-22 գրությամբ է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ներկայացրել մասնակցի տվյլները լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Այսպիսով, Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը: Մասնավորապես, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտում կողմից ներկայացված

հայտը մերժվել է՝ 10.02.2022թ. արձանագրությամբ, այսինքն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ են եկել 10.02.2022թ., սակայն համապատասխան հիմքերն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն միայն 28.02.2022թ.:

Այսպիսով, Պատվիրատուն պետք է համապատասխան հիմքերի ուղարկեր լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն, ինչպես արդեն նշել ենք, հիմքերը ներկայացվել են ուշացումով, միայն 28.02.2022թ. (դրա մասին է վկայում նաև ՀՀ ՖՆ բողոքներ քննող անձին ուղղված իր գրությամբ):

Արդյունքում Պատվիրատուն խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, որը սահմանում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական

փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Այսպիսով, քանի որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել ԲԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ մի շարք ընթացակարգեր և մասնակիցը չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Կարգի 45-րդ կետով նախատեսված ժամկետը խախտելու հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ում աշխատում եմ մոտ 170 աշխատակից և Ցուցակում ներառվելու դեպքում Ընկերությունը սպիպված պետք է գնա աշխատեղերի կրճատմանը, եթե ոչ Ընկերության գործունեության դադարեցմանը, ինչը վերջին հաշվով նաև կարող է վնաս պատճառել պետությանը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արարատի մարզի Մխչյան, Արալեզ, Փոքր Վեդի, Մասիս և Նոր Կյանք համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման

աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.11.2021թ.-ին հայտարարվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 14.12.2021թ.-ին:

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.02.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում՝ «սարքերի և սարքավորումների նկարագիրը», իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում և ծավալաթերթ-նախահաշվում առկա են անհամապատասխանություններ:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Արձանագրության 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ վերջինիս կողմից ներկայացված հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3849-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն կետի 3-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել: Առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ՀՀ Արարատի մարզի Մխչյան, Արալեզ, Փոքր Վեդի, Մասիս և Նոր Կյանք համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել,

- իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն

էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հայտերի մերժման դեպքում գնման ընթացակարգի արձանագրությունը պետք է հստակ պարունակի դրանց հիմնավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ՀՀ Արարատի մարզի Մխչյան, Արալեզ, Փոքր Վեդի, Մասիս և Նոր Կյանք համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.11.2021թ.-ին հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5» ծածկագրով գնման ընթացակարգ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 14.12.2021թ.-ին: Հանձնաժողովի 10.02.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում՝ «սարքերի և սարքավորումների նկարագիրը», իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում և ծավալաթերթ-նախահաշվում առկա են անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ վերջինիս կողմից ներկայացված հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավրություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի՝ ընկերության հայտը մերժելու մասին կայացված արձանագրությունը, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով, հստակ չի պարունակում դրանց հիմնավորումը, մասնավորապես՝ Հանձնաժողովը նշել է, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, սակայն նույն արձանագրությամբ նշված չէ հիմնավորում այն մասին, թե ներկայացված 1.1 հավելվածի ո՞ր չափորոշիչները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերի կոնկրետ ո՞ր պահանջին չի համապատասխանում, առկա չէ կոնկրետ նկարագրություն կամ համեմատական որևէ փաստաթուղթ կատարված ուսումնասիրության մասին, որպիսի պայմաններում, Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված դրույթի խախտում:

Միաժամանակ Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել 14.12.2021թ.-ին, իսկ Հանձնաժողովի կողմից «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը կայացվել է Հանձնաժողովի 10.02.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ տասն աշխատանքային օրվա խախտմամբ, ինչի արդյունքում, Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ չէ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված դրույթն իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատումը հանձնաժողովն իրականացնում է հայտի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում գնահատում իրականացնելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականությունների կանխարգելմանը և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում այն ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանի մեկ այլ 18.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1148 որոշմամբ, գտել է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3849-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/105 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**